Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

2 դեկտեմբերի 2010 թվականի N 47

---

54. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՀ ԾԱԳՄԱՆ ՍՊԻՐՏԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 1999 թվականի դեկտեմբերի 28-ի N Ն-041-2 <<Ազատ առևտրի գոտու ստեղծման մասին համաձայնագիրը վավերացնելու մասին>> որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով՝ համաձայն որի՝ եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր՝ քան նախատեսված են օրենքներով՝ ապա կիրառվում են այդ նորմերը՝ հանձնարարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գ. Խաչատրյանին՝ 2011 թվականի հունվարի 1-ից սկսած Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ԱՊՀ երկրների ծագման սպիրտային խմիչքների նկատմամբ կիրառել ներքին արտադրության սպիրտային խմիչքների համար սահմանված ակցիզային հարկի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. դեկտեմբերի
Երևան

Nrq52[1]

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թ.
դեկտեմբերի 2-ի նիստի N 47
արձանագրային որոշման

ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՍՊԻՐՏԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)
2203	գարեջուր	1 լիտրի համար	70
2206	Խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդրԴ պերրու (տանձի սիդր)Դ մեղրաըմպելիք)	1 լիտրի համար	180
2207	Էթիլային սպիրտ	1 լիտրի համար	600
2208	Սպիրտային խմիչքներ՝ բացառությամբ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղիների	բացթողման գնի (առանց ԱԱՀ և ակցիզային հարկի)	30 տոկոսԴ բայց ոչ պակասԴ քան 1 լիտրի համար 380 դրամ
	ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղիներ	տեղական արտադրության դեպքում՝ բացթողման գնի (առանց ԱԱՀ և ակցիզային հարկի)Դ իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	30 տոկոսԴ բայց ոչ պակասԴ քան 1 լիտրի համար 500 դրամ